ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՄ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ԵՄ առաքելությունը Ընդհանուր անվտանգային և պաշտպանության քաղաքականության (ԸԱՊՔ) ներքո գործող անզեն և գործադիր լիազորություններ չունեցող քաղաքացիական առաքելություն է:

ՄԱՆԴԱՏ. Հայաստանում ԵՄ առաքելության խնդիրն է դիտել, զեկուցել անվտանգային իրադրության մասին Ադրբեջանի հետ միջազգային սահմանի երկայնքով՝ հայկական կողմում: Այն ներդրում կունենա հակամարտության ազդակիր ՀՀ տարածքներում բնակվող անձանց անվտանգության ապահովման գործին, ինչպես նաև կնպաստի Հայաստանի և Ադրբեջանի միջև վստահության մթնոլորտի ձևավորմանը: Հայաստանում ԵՄ առաքելության տեղակայումը Եվրոպական միության տարածաշրջանում խաղաղության աջակցությանն ուղղված ջանքերի էապես կարևոր բաղադրիչն է, և գործիքակազմ, որը խթանելու է նախագահ Շառլ Միշելի, ԵՄ բարձր ներկայացուցիչ Ջուզեպ Բորելի և ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարի միջնորդական ջանքերը:

Նախապատմություն. Հայաստանում ԵՄ առաքելությունը հիմնվել է Եվրոպական միության կողմից՝ ի պատասխան «հողի» վրա ամբողջական կազմով ԵՄ քաղաքացիական առաքելություն տեղակայելու վերաբերյալ ՀՀ իշխանությունների 2022 թվականի դեկտեմբերի պաշտոնական դիմումի: Առաքելության տեղակայումը հաջորդում է Հայաստանի և Ադրբեջանի միջև միջազգային սահմանի ողջ երկայնքով՝ հայկական կողմում 2022 թվականի հոկտեմբերի 20-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 19-ը տեղակայված ԵՄ դիտորդական կարողության հաջողված փորձին:

Նախատեսվող գոտի. Հայաստանում ԵՄ առաքելությունը կտեղակայվի է Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանի երկայնքով՝ հայկական կողմում: Այն ներառում է Գլխավոր շտաբը՝ Եղեգնաձորում, վեց Առաջավոր օպերատիվ հենակետեր, որոնց միջոցով կապահովվի տարածքի ծածկույթը, և Կապի գրասենյակը՝ Երևանում: Հայաստանում ԵՄ առաքելությունը տեղակայվելու և գործելու է բացառապես Հայաստանի միջազգայնորեն ճանաչված տարածքի վրա: Ուստի, Լաչինի միջանցքը դուրս է Հայաստանում ԵՄ առաքելության պատասխանատվության գոտուց:

ՀՀ հետ փոխհամաձայնեցումը. Հայաստանում ԵՄ առաքելության գործողությունները կիրականացվեն ՀՀ իշխանությունների հետ փոխհամաձայնեցված: ԵՄ առաքելությունը իրադրությամբ պայմանավորված նախատեսում է իրավիճակին վերաբերող զարգացումների մասին տեղեկություն փոխանակել Ադրբեջանական կողմի հետ:

Առաքելությունը հիմնվել է ԵՄ Արտաքին հարաբերությունների հարցերով խորհրդի որոշմամբ՝ 2023 թվականի հունվարի 23-ին:

Առաքելությունը մեկնարկել է ԵՄ Արտաքին հարաբերությունների հարցերով խորհրդի որոշմամբ՝ 2023 թվականի փետրվարի 20-ին: Նույն օրը՝ 2023 թվականի փետրվարի 20-ին Եղեգնաձորում պաշտոնապես բացվել է ԵՄ առաքելության Գլխավոր շտաբը և տեղակայվել նախնական գործառնական ներուժը:

ԵՄ առաքելության ղեկավարը Մարկուս Ռիտտերը (Գերմանիա) Գերմանիայի դաշնային ոստիկանության նախկին սպա է՝ ԸԱՊՔ ներքո գործող քաղաքացիական առաքելություններում աշխատանքի երկարամյա փորձով: 2017-2019 թվականներին նա ծառայել է Իրաքում ԵՄ առաքելության ղեկավար, իսկ մինչ այդ՝ եղել է բազմաթիվ այլ ԵՄ քաղաքացիական առաքելություններում:

Առաքելության անձնակազմը: Առաքելությունը նախատեսում է մինչև 103 միջազգային անձնակազմ ունենալ մինչև այս ամառ: Հայաստանում ԵՄ առաքելությունը քաղաքացիական առաքելություն է, որն ունի բացառապես անզեն դիտորդ-փորձագետներ ԵՄ անդամ պետություններից և ղեկավարվում է Բրյուսելում գտնվող ԵՄ քաղաքացիական կենտրոնակայանի կողմից:

Մանդատի ժամկետը. Հայաստանում ԵՄ առաքելության *մանդատը երկու տարի ժամկետով է*, որը կարող է վերանայվել: